

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ (ՀԻՄՆԱԴՐԱՄ)

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ (ԴԱՄԻՉ 031101.00.6 և 031101.00.7)  
ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

ԵՐԵՎԱՆ 2017

Կազմողներ՝

Տնտ.գիտ.թեկն., դոցենտ Ա.Ս.Թադևոսյան  
Տնտ.գիտ.թեկն., պրոֆեսոր Լ.Հ.Աղաջանյան  
Տնտ.գիտ.թեկն., դոցենտ Ե.Վ.Պետրոսյան  
Տնտ.գիտ.թեկն., դոցենտ Ս.Ա.Մկրտչյան

Գրախոս՝

Ուղեցույցը կազմվել է «Տնտեսագիտություն» մասնագիտության (դասիչ 031101.00.6 և 031101.00.7) ՀՀ Կրթության և գիտության նախախարարության կողմից հաստատված բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի և մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշիչների պահանջներին համապատասխան:

Ուղեցույցը հաստատվել է ՀԱՊՀ ռեկտորատի 2017թ. հունվարի \_\_\_\_ նիստում (արձանագրություն թիվ )

## **1. Դիպլոմային աշխատանքի և մագիստրոսական թեզի կատարման նպատակը և խնդիրները**

**Դիպլոմային աշխատանքը և մագիստրոսական թեզը** ավարտական որակավորման աշխատանքներ են (այսուհետ՝ աշխատանքներ), որոնք կատարում են մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան և թույլ են տալիս բացահայտել, ամփոփել շրջանավարտի տեսական և գործնական պատրաստվածության մակարդակը բարձրագույն մասնագիտական կրթության բակալավրի և մագիստրոսի որակավորման պետական կրթական չափորոշիչներով սահմանված մասնագիտական խնդիրների լուծման բնագավառում:

Աշխատանքների հիմնական նպատակն է շրջանավարտների՝ ուսումնառության ընթացքում ձեռք բերած տեսական ու գործնական գիտելիքների ամփոփումը, համակարգումը և խորացումը, հետազոտական կարողությունների և ինքնուրույն աշխատանքի փորձառության ամրապնդումը, որոնք կարող են ապահովվել նրանց կողմից հետևյալ խնդիրների լուծմամբ.

- դրսևորել աշխատանքի տրամաբանական կառուցման, տեքստի շարադրման ունակություններ,
- ցուցաբերել ինչպես մասնագիտական, այնպես էլ ընդհանուր ճարտարագիտական և այլ դասընթացներից համապատասխան գիտելիքներ,
- գործադրել մասնագիտական և մեթոդական գրականությունից, նորմատիվային փաստաթղթերից և վիճակագրական տեղեկատվությունից օգտվելու կարողություններ,
- կիրառել գիտելիքներ և հմտություններ՝ ծրագրային փաթեթների, համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հավաքագրված և ստացված տեղեկատվության մշակման և ներկայացման համար,
- կարողանալ ինքուրույն ամփոփել ստացված արդյունքները, հանգել եզրակացությունների և կատարել առաջարկություններ,
- ձեռք բերել ուսումնասիրություններ, վերլուծություններ և հետազոտություններ իրականացնելու փորձառություն:

Ուսանողն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում ինքնուրույն և հավաստի աշխատանքի, հետազոտության կատարման համար:

## **2. Աշխատանքներին ներկայացվող պահանջները**

Աշխատանքներն ուղղված են ամրապնդելու և ընդլայնելու տնտեսագիտության բակալավրի և տնտեսագիտության մագիստրոսի որակավորում ստացող շրջանավարտների տեսական և գործնական գիտելիքները՝ արտադրատնտեսական, պլանա-տնտեսագիտական, կազմակերպչա-կառավարչական, սոցիալ-տնտեսական, ֆինանսական, հետազոտական, մարքեթինգային, արտաքին տնտեսական, ձեռնարկատիրական ուղղություններով:

Բովանդակային առումով աշխատանքը պետք է՝

- ներկայացվի որպես բնագավառի հիմնահարցերից մեկին վերաբերող տեսական, վերլուծական, սոցիալ-տնտեսական կամ փորձարարական վերլուծություն/հետազոտություն, որում շրջանավարտը բացահայտում է իր տեսական գիտելիքները և գործնական ունակությունները, որոնք թույլ են տալիս ինքնուրույն լուծելու մասնագիտական բնույթի խնդիրներ,
- արտացոլի շրջանավարտի կողմից վերլուծական/հետազոտական մեթոդների յուրացման աստիճանը, տեսական ընդհանրացումներ և գործնական եզրակացություններ, բնագավառի հիմնահարցերի լուծման կատարելագործման վերաբերյալ հիմնավորված առաջարկություններ և երաշխավորություններ կատարելու ունակությունը,
- կրի ստեղծագործական բնույթ՝ վիճակագրական հավաստի տվյալների օգտագործմամբ,
- բացահայտի շրջանավարտի պատրաստվածության աստիճանը ինքնուրույն աշխատելու, ոլորտի և դրանում գործող ձեռնարկության արտադրատնտեսական գործունեության արդյունքների վերլուծության, ճիշտ եզրակացություններ կատարելու, կոնկրետ միջոցառումների պլան մշակելու և ընդհանուր արդյունավետ կառավարման առումով,
- համապատասխանի նյութի տրամաբանված և հստակ շարադրման պահանջներին և հենվի հավաստի փաստերի վրա,
- արտացոլի շրջանավարտի ունակությունը՝ օգտագործելու տեղեկությունների որոնման, ընտրության, համակարգման և մշակման արդի մեթոդները, օգտագործելու բնագավառի նորմատիվային-իրավական ակտերը,
- ձևավորված լինի ուսանողի ամփոփիչ ատեստավորմանը ներկայացվող՝ համալսարանի կողմից ընդունված պահանջներին համապատասխան, ունենա վերլուծական/հետազոտական աշխատանքի հաշվետվությանը բնորոշ կառուցվածք և համակարգչային շարվածքի ծավալ:

### 3. Աշխատանքների կատարման հաջորդականությունը

- Աշխատանքները կատարվում են հետևյալ հաջորդականությամբ.
- խորհրդատվություն թեմայի և դեկավարի ընտրման վերաբերյալ,
  - մասնագիտական ամբիոնի կողմից թեմայի, դեկավարի և խորհրդատուների հաստատում,
  - դեկավարի, խորհրդատուների հետ աշխատանքի նպատակի և խնդիրների հստակեցում, բովանդակության կազմում և առաջադրանքի ներկայացում,
  - ամբիոնի/սեկտորի վարիչի կողմից առաջադրանքի հաստատում,
  - ուսումնասիրվող/հետազոտվող օբյեկտի տեսական մոտեցումների և դրույթների վերլուծություն,
  - խնդրի հստակեցում և շարադրում,
  - ուսումնասիրվող/հետազոտվող օբյեկտի տնտեսական գործունեության վերաբերյալ պլանային, փաստացի կամ պայմանական տվյալների հավաքագրում, վերլուծություն և ընդհանրացում,
  - ուսումնասիրության/հետազոտության արդյունքներով խնդրի լուծում,

- եզրակացությունների և առաջարկությունների ձևակերպում,
- աշխատանքի ձևավորում,
- ստուգման համար աշխատանքի ներկայացում ղեկավարին և խորհրդատուներին,
- հաստատում խորհրդատուների և ղեկավարի կողմից,
- կարծիքի ստացում ղեկավարի կողմից,
- աշխատանքի պաշտպանության թույլատվություն (օրվա հաստատում) ամբիոնի վարիչի/սեկտորի և ինստիտուտի տնօրենի/ղեկանի կողմից,
- նախնական պաշտպանություն,
- գրախոսում,
- աշխատանքի պաշտպանություն:

#### **4. Աշխատանքների թեմաներին ներկայացվող պահանջներ**

Աշխատանքների թեմատիկան սահմանում է մասնագիտացնող ամբիոնը: Թեմատիկայում պարտադիր կարգով պետք է ներառվեն ոլորտի և դրանում գործող ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման առաջնահերթ ու հրատապ հարցերը, տեխնիկատնտեսական պահանջները, առանձին և մասնավոր խնդիրների հետ կապված տեսական կամ փորձնական ուսումնասիրություններ, որոնք համապատասխանում են տվյալ մասնագիտությամբ բակալավրի և մագիստրոսի պատրաստման բովանդակությանը:

Աշխատանքների թեմաների ընտրությունը պետք է պայմանավորված լինի դրանց կարևորությամբ և արդիականությամբ, փաստացի տվյալների հավաքագրման և մշակման հնարավորությամբ, մասնագիտական ոլորտի տեղեկատվական նյութի առկայությամբ և ուսումնասիրվող օբյեկտի՝ կազմակերպության համար նշանակությամբ:

Աշխատանքը, որպես կանոն, պետք է լինի ուսումնառության ընթացքում իրականացված կուրսային աշխատանքների կամ նախագծերի, հետազոտական աշխատանքների շարունակությունը և տրամաբանական ամփոփումը:

Աշխատանքների օրինակելի թեմաները բերված են Հավելված 1-ում: Տնտեսագետների դիպլոմային աշխատանքների և մագիստրոսական թեզերի օրինակելի թեմաները կոչված են լուծելու տնտեսության համապատասխան ոլորտների և գործող ձեռնարկությունների տնտեսագիտության և կառավարման տարբեր հիմնախնդիրներ: Օրինակելի թեմաներում դիտարկվում են հետևյալ ուղղությունները. ձեռնարկության ֆինանսա-տնտեսական գործունեությունը, ներդրումային և ինովացիոն գործունեության արդյունավետության բարձրացումը, արտադրության կառավարման համակարգի բարելավումը, ձեռնարկության արտադրական և կազմակերպչական կառուցվածքի արդիականացումը, հիմնական արտադրական ֆոնդերի, էներգետիկ, բնական, նյութական ռեսուրսների օգտագործման լավարկումը, մարքեթինգային ռազմավարության, արտադրանքի կամ ծառայության որակի և մրցունակության բարելավումը, աշխատանքի արտադրողականության աճի ապահովման և խթանման, աշխատակազմի արդյունավետ կառավարման, անձնակազմի շահադրդման և նմանատիպ այլ խնդիրներ:

Առանձնահատուկ ուշադրություն է հատկացվում համապատասխան ոլորտում առկա գիտատեխնիկական առաջընթացի արդյունքների ներդրման և որպես հետևանք՝ արդյունավետության բարձրացման հիմնախնդիրների ուսումնասիրմանն ու հետազոտմանը:

Ուսանողներին, որպես կանոն, հնարավորություն է տրվում ընտրելու աշխատանքի թեման: **Հավելված 1-ում** բերված թեմաները օրինակելի են և պահանջում են փաստացի օբյեկտի ուսումնասիրման կամ հետազոտման գործընթացին համապատասխանություն: Առաջարկվող թեմաների ընդգրկվածություն չի բացառվում թեմայի առաջարկում ուսանողի կողմից, որը համաձայնեցվում է ղեկավարի հետ և հաստատվում ըստ ընթացակարգի:

Ուսանողի կողմից թեմայի ընտրության բացակայության դեպքում ամբիոնի/սեկտորի վարիչը ղեկավարի համաձայնությամբ ընտրում է թեման և ներկայացնում հաստատման: Թեմաները, ղեկավարները, խորհրդատուները հաստատվում են պրոռեկտորի հրամանով և, որպես կանոն, փոփոխման ենթակա չեն:

## **5. Աշխատանքի ղեկավարը, խորհրդատուները և նրանց պարտականությունները**

Աշխատանքի ղեկավար են նշանակվում ամբիոնի/սեկտորի դասախոսները, ասիստենտները, դոցենտները և պրոֆեսորները, ինչպես նաև այլ կազմակերպություններից բարձր որակավորում ունեցող մասնագետներ կամ գիտական աշխատողներ, որոնց գործունեությունը և գիտական ուղղվածությունը համապատասխանում է թողարկվող մասնագիտությանը: Որպես կանոն, մագիստրոսական թեզերի ղեկավարները պետք է ունենան գիտական աստիճան:

Ղեկավարը պարտավոր է.

- հստակեցնել աշխատանքի կատարման խնդիրը՝ առաջադրանքը,
- կազմել աշխատանքի կատարման օրացուցային պլան աշխատանքի կատարման ժամանակահատվածի համար՝ հստակեցնելով նաև երեք ատեստավորման համար կատարվելիք խնդիրները և համապատասխան ծավալները,
- առաջարկել վերլուծության/հետազոտություն նպատակից և խնդիրներից բխող տեղեկատվական աղբյուրներ (հիմնական և օժանդակ գրականություն, գիտական հոդվածներ, մենագրություններ, օրենսդրական նորմատիվային ակտեր, օրենքներ, տեղեկատվություն և այլն, այդ թվում՝ նաև օտար լեզվով),
- ըստ օրացուցային պլանի՝ իրականացնել աշխատանքի կատարման ընթացիկ վերահսկում,
- հստակեցված ժամկետներում իրականացնել խորհրդատվություն՝ ամբիոնի կողմից հաստատված խորհրդատվության գրաֆիկին համապատասխան և ըստ աշխատանքում ամրագրված գլուխների կամ պարագրաֆների,
- պարտադիր մասնակցել աշխատանքների պաշտպանությանը:

Ամբիոնի/սեկտորի վարիչը պարտավոր է մեթոդական ցուցումներով ապահովել աշխատանքի կատարումը, հաստատել ատեստավորման հանձնաժողովների կազմը, երեք ատեստավորումների օրերն ու ժամը և տեղեկացնել դրանց մասին ղեկավարներին: Վերջիններս պարտավոր են տեղեկացնել այդ ամենը ուսանողներին:

Ուսանողի կողմից օրացուցային պլանից շեղման, թերացման, չներկայանալու դեպքերում աշխատանքի ղեկավարը, խորհրդատուները պարտավոր են այդ մասին գեկուցագրով տեղեկացնել ամբիոնի վարիչին:

## **6. Աշխատանքների կառուցվածքները**

**Դիպլոմային աշխատանքի** ծավալը պետք է կազմի 55-65 համակարգչային տպագիր էջ, որից տեխնոլոգիական բաժինը՝ 10-12 էջ (առանձին դեպքերում մինչև 20)՝ խիստ փոխկապակցված տնտեսագիտական բաժնի հետ, բնապահպանության և կենսագործունեության անվտանգության բաժինները՝ յուրաքանչյուրը մինչև 4-5 էջ՝ նույնպես խիստ փոխկապակցված թեմային:

**Մագիստրոսական թեզի** ծավալը պետք է լինի 60-70 համակարգչային տպագիր էջ, որից տեխնոլոգիական բաժինը՝ 12-15 էջ (առանձին դեպքերում մինչև 20)՝ խիստ փոխկապակցված տնտեսագիտական բաժնի հետ:

**Դիպլոմային աշխատանքի կառուցվածքն է** (տե՛ս Հավելված 2).

- տիտղոսաթերթ (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից, տե՛ս Հավելված 3)
- առաջադրանք (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից, տե՛ս Հավելված 4)
- բովանդակություն,
- ներածություն,
- երկու (որոշ դեպքերում երեք և ավելի) գլուխներ,
- բնապահպանության և կենսագործունեության անվտանգության բաժիններ,
- եզրակացություն,
- օգտագործված գրականության ցանկ,
- 5 A4 ձևաչափի հավելվածներ, որոնք պետք է ներառեն աղյուսակներ տնտեսագիտական և տեխնոլոգիական մասերից, գծապատկերներ կամ նկարներ (տե՛ս Հավելված 5),
- հավելվածներ:

**Մագիստրոսական թեզի կառուցվածքն է** (տե՛ս Հավելված 6).

- տիտղոսաթերթ (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից, տե՛ս Հավելված 7)
- հաստատման թերթ (տե՛ս Հավելված 8),
- կենսագրական տվյալներ (տե՛ս Հավելված 9),
- առաջադրանք (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից, տե՛ս Հավելված 10),
- համառոտագիր (տե՛ս Հավելված 11),
- բովանդակություն (տե՛ս Հավելված 12),
- նկարների ցանկ (տե՛ս Հավելված 13),
- աղյուսակների ցանկ (տե՛ս Հավելված 14),
- ներածություն,
- երեք (որոշ դեպքերում չորս և ավելի) գլուխներ,
- եզրակացություններ,

- օգտագործված գրականության ցանկ,
- հավելվածներ:

**Ներածությունում** տրվում է աշխատանքի ընդհանուր բնութագիրը, հիմնավորվում է ընտրված թեմայի կարևորությունը և արդիականությունը, սահմանվում է վերլուծության/ հետազոտության հիմնական նպատակը և խնդիրները, ներկայացվում են աշխատանքում ստացված արդյունքները (նորույթը), հստակեցվում են նաև ուսումնասիրվող օբյեկտը և առարկան, տեսական, մեթոդական ու տեղեկատվական հիմքերը և կառուցվածքը (ըստ գլուխների բովանդակության):

**Առաջին գլուխը** կրում է տեսական-մեթոդական բնույթ: Այստեղ գիտական, օրենսդրական, իրավական, վիճակագրական, պրակտիկ և հայրենական ու արտասահմանյան աղբյուրների, մեկնաբանությունների հիման վրա դիտարկվում են հետազոտության հիմնախնդրի տեսական հարցադրումները և ասպեկտները՝ համապատասխան հղումներով: Գրականության և հոդվածների վերլուծության արդյունքում պետք է բացահայտվեն տվյալ հիմնախնդրի մեթոդաբանական հիմքերը, տրվեն տարբեր տեսակետների, մեկնաբանությունների համեմատական գնահատականները և հստակեցվի տվյալ խնդրի հետազոտման ու լուծման սեփական մոտեցումը:

**Երկրորդ գլուխում** գիտական, տեղեկատվական, նորմատիվային, օրենսդրական, տեխնիկական, վիճակագրական, պրակտիկ և այլ հատուկ տեղեկատվության ուսումնասիրման հիման վրա իրականացվում է օբյեկտի բազմակողմանի համալիր ուսումնասիրություն: Տրվում են նաև օբյեկտի և առարկայի մանրամասն բնութագրերը, բացահայտվում գործունեության միջավայրն ու ազդող գործոնները, զարգացման միտումները, հիմնախնդիրները և դրանց լուծման ուղղությունները:

**Երրորդ գլխում**, իրականացված տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա, մոդելավորվում է խնդիրը, տրվում են հիմնախնդիրների լուծման ուղղությունները և զարգացման հնարավորությունները, լավարկվում է կառավարման գործընթացը:

**Եզրակացություններ բաժնում** ներկայացվում են աշխատանքում հետազոտության արդյունքներով պայմանավորված համառոտ եզրահանգումները, գնահատվում դրված խնդրի լուծման ամբողջականությունը և իրատեսականությունը, տրվում են կոնկրետ առաջարկություններ: Նշվում են նաև թեմայի հետագա զարգացման հեռանկարները:

**Օգտագործված գրականության ցանկ** բաժնում ներառվում են նորմատիվա-իրավական ակտերը, կանոնակարգերը, գիտական և ուսումնական գրականությունը, օգտագործվող այլ նյութերը, ինտերնետային կայքերը, որոնք ներկայացվում են տպագիր աշխատանքների մատենագիտական նկարագրությունների միասնական պահանջներին համապատասխան

**Տեխնոլոգիական բաժինը** վերաբերում է տնտեսագիտական բաժնում ձևակերպված խնդրի տեխնոլոգիական լուծմանը, իսկ որոշ մակրոտնտեսական և միկրոտնտեսական ընդհանուր բնույթի թեմաների դեպքում՝ տնտեսագիտական վերլուծության/հետազոտության օբյեկտի հիմնական տեխնոլոգիական խնդիրներին: Այս բաժնում անհրաժեշտ է ներառել տեխնոլոգիաների ընտրման և հիմնավորման գործընթացները, դրանց պարամետրերի և ցուցանիշների որոշումն ու հաշվարկումը, տեխնիկական համակարգերի մշակումն ու նախագծումը, նախագծի, հնարավոր

տարբերակների գնահատումը և հիմնական տարբերակի ընտրությունը, տեխնոլոգիական այլ լուծումներ:

Դիպլոմային աշխատանքների **բնապահպանության բաժինը** նախատեսում է դիտարկվող օբյեկտի շրջակա միջավայրի վրա ազդեցության էկոլոգիական գնահատումը, ինչպես նաև այդ ազդեցության բացասական հետևանքների կանխարգելմանը և նվազեցմանն ուղղված միջոցառումների առաջարկումը:

Դիպլոմային աշխատանքների **կենսագործունեության անվտանգության բաժնում** ներկայացվում է դիտարկվող օբյեկտի կենսագործունեության միջավայրի վտանգավոր և վնասակար գործոնների և բարենպաստ ու անվտանգ աշխատանքային պայմանների բնութագրերը:

Դիպլոմային աշխատանքների **կենսագործունեության անվտանգության բաժինը** նախատեսում է դիտարկվող օբյեկտի արտադրա-տեխնոլոգիական գործընթացներում մարդու անվտանգության ապահովման և սանիտարական նորմերին համապատասխան աշխատանքային պայմանների ստեղծման, պահպանման և բարելավման հարցերը:


Տեխնոլոգիական, բնապահպանության, կենսագործունեության անվտանգության բաժինների թեմաները և առաջադրանքը համաձայնեցվում է աշխատանքի ղեկավարի հետ:

## **7. Աշխատանքներին ներկայացվող տեխնիկական պահանջներ**

Աշխատանքները ներկայացվում են հայերենով: Տեքստի տառատեսակը՝ GHEA Grapalat կամ Sylfaen, տառաչափը՝ 12, յուրաքանչյուր էջում 28-30 տող (Line spacing) 1.5-1.8, էջի ձևաչափը՝ A4 (21×29,7 սմ), լուսանցքները. վերևից՝ (Top) 2.5 սմ, ներքևից՝ (Bottom) 2սմ, ձախից՝ (left) 3սմ, աջից՝ (right) 1սմ: Նոր տողերը (first line) սկսել 0.75սմ-ից:

Աշխատանքների գլուխների վերնագրերը գրվում են մեծատառերով (տառաչափը՝ 14 և Bold), սկսվում նոր էջից և տողի մեջտեղում: Պարագրաֆները շարունակվում են մի տող ներքևից (տառաչափը՝ 12 և Bold): Տիտղոսաթերթը համարվում է առաջին էջ, որը չի համարակալվում:

Նկարները կամ գծապատկերները և աղյուսակները տեղադրվում են տեքստում՝ այդ մասին նշում կատարելուց հետո (օրինակ. Պլանշետների արտադրության շուկայի դինամիկան 2015թ.-ին ներկայացված է նկ.1.2.-ում, կամ՝ (տե՛ս նկ.1.2.)), նույն կամ հաջորդ էջում և ունեն միջանցիկ համարակալում: Նկարի մակագրությունը տրվում է 11 տառաչափով՝ ներքևում, շեղ (Italic) տառով:



Նկ.1.2. Պլանշետների արտադրության շուկայի դինամիկան 2015թ.-ին

Աղյուսակները պետք է համարակալվեն և ունենան վերնագիր, որոնք տրվում են *Italic*, 12 տառաչափով: Աղյուսակները կարելի է տեղադրել ուղղաձիգ, հորիզոնական դիրքով: Յուրաքանչյուր աղյուսակ պետք է համարակալվել վերևի աջ անկյունում արաբական թվերով, որի տակ գրվում է վերնագիրը: Մեծ չափերով աղյուսակները տեղադրվում են առանձին էջի վրա, որը էջակալվում է:

## Աղյուսակ 1.2

SS ոլորտի համաշխարհային ծախսումների կանխատեսումը 2016թ.-ի համար (մլրդ.

դոլար)<sup>1</sup>

|                                     | 2015թ.<br>ծախսեր | 2015թ.<br>դինամիկան(%) | 2016թ.<br>ծախսեր | 2016թ.<br>դինամիկան (%) |
|-------------------------------------|------------------|------------------------|------------------|-------------------------|
| Տվյալների կենտրոններ                | 170              | 1.8                    | 175              | 3.0                     |
| Ծրագրային ապահովում                 | 310              | -1.4                   | 326              | 5.3                     |
| Ապարատային ապահովում                | 653              | -5.8                   | 641              | -1.9                    |
| SS ծառայություններ                  | 912              | -4.5                   | 940              | 3.1                     |
| Հեռահաղորդակցման<br>ծառայություններ | 1472             | -8.3                   | 1454             | -1.2                    |
| <b>Ընդամենը</b>                     | <b>3517</b>      | <b>-5.8</b>            | <b>3536</b>      | <b>0.6</b>              |

Աղյուսակի մի հատվածը հաջորդ էջ տեղափոխելու դեպքում պարտադիր է այունակների համարակալումը, որը կրկնվում է տեղափոխված աղյուսակի հատվածի գլխամասում: Հաջորդ էջը տեղափոխված աղյուսակի հատվածի վրա նշվում է՝ *Աղ. 2.1-ի շարունակությունը*:

<sup>1</sup> Gartner հունվար 2016 թ., [Gartner Says Worldwide IT Spending is Forecast to Grow 0.6 Percent in 2016](#)

Բանաձևերը և մաթեմատիկական արտահայտությունները տրվում են Microsoft Equation-ով: Բանաձևերը ներկայացվում են առանձին տողով և մեջտեղում: Դրանք համարակալվում են աջ կողմում՝ փակագծերի մեջ, տողի վերջում:

$$(x + a)^n = \sum_{k=0}^n \binom{n}{k} \quad (1.2)$$

Աշխատանքում պարտադիր չէ տալ այն բանաձևերը և նկարագրել այն մեթոդները, որոնք վերցված են մասնագիտական գրականությունից. կարելի է կատարել միայն համապատասխան հղումներ:

**Աշխատանքում պարտադիր են հղումները:** Դրանցում պետք է տրվեն աղբյուրները՝ ընդգրկելով հեղինակի(ների) ազգանունը և անվան առաջին տառը (Bold), նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները (տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, և աղբյուրում՝ գրականությունում կամ հոդվածում, տվյալ ինֆորմացիայի էջը): Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Հղումներում տրվում են նաև կարծիքներ կամ մեկնաբանություններ:

Օրինակ.

Յուրգեն Դոնգեսը և Անդրեաս Ֆրեյտագը նշում են. անհնար է տնտեսական քաղաքականության քննարկման ժամանակ այն չդիտարկել ընդհանուր քաղաքականության համատեքստում, ընդ որում, ինչպես ազգային, այնպես էլ միջազգային<sup>2</sup>:

Կամ.

Խնդիրը տնտեսական աճի, կենսապայմանների բարելավման հետ զուգահեռ պետության կողմից սոցիալական ինստիտուտների կայացումն է, ամրապնդումը և դրանց դերակատարության կարևորության բարձրացումը<sup>3</sup>:

Կամ.

Պրոֆ. Լ.Ե.Վարակինի գլխավորությամբ Կապի միջազգային ակադեմիայում (ԿՄԱ) մշակված տեսությունը, որի գնահատման մեխանիզմը հիմնված է չափանիշերի վեկտորային ներկայացման վրա, կարծում ենք, ենթակառուցվածքային ոլորտի զարգացածության առավել ամբողջական ու ճկուն գնահատումն է<sup>4</sup>:

Գրականության ցանկը կարելի է ներկայացնել կամ այբբենական կարգով՝ նշելով հղումների համարները տեքստում, կամ համարակալված ըստ աշխատանքում հղումների: Ցանկում աղբյուրները պետք է ընդգրկեն՝ հեղինակի/ների/ ազգանունը և անվան առաջին տառը, նյութերի լրիվ անվանումը, հրատարակության տվյալները /տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջերը/: Տեղեկատվական պաշտոնական, այդ թվում՝ էլեկտրոնային աղբյուրների, համակարգչային ծրագրերի, հաշվետվությունների, հրահանգների, հեղինակային իրավունքի արտոնագրերի, պա-

<sup>2</sup> Donges J., Freytag A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.1-11.

<sup>3</sup> Հեղինակները դա տեսնում են սոցիալական պետության կարգավորման մեխանիզմների միջոցով՝ համերաշխության(solidarprinzip-կոլեկտիվ ապահովություն) և սուբսիդարության, կամ իրավական նորմերի օժանդակ բնութագրային (subsidiaritaetsprinzip- անհատական պատասխանատվություն և ինքնաապահովում) սկզբունքներով. Տե՛ս Donges J., Freytag A. Allgemeine Wirtschaftspolitik: Lucius und Lucius, 2001. s.4.

<sup>4</sup> Варикин Л.Е.Электросвязь и экономка: информационно\_экономический закон.Электросвязь.-1992г., N12, С.13.

տենտների դեպքում ներկայացվում են լրիվ տվյալները: Աղբյուրները բերվում են բնօրինակի լեզվով: Դասակարգումը՝ նախ հայերեն, այնուհետև ռուսերեն, անգլերեն և հետո ինտերնետային կայքեր:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Թադևոսյան Ա., Մանուկյան Ա., Օդաբաշյան Վ., Լալայան Ա.** Միջազգային մարքեթինգ. Տեսություններ, միտումներ, փորձ: Ուս. ձեռնարկ. - Եր.: Ճարտարագետ, 2005. - 230 էջ:
2. **«Օրանժ Արմենիա» ընկերության համացանցային կայք.** «Նորություններ» բաժին, 15.12.2016թ.՝ <http://www.orangearmenia.am/about-orange-armenia/news/solar/>
3. **Մկրտչյան Թ., Խաչատրյան Ս.,** «Տնտեսական անվտանգության հասկացության վերաբերյալ պատկերացումների էվոլյուցիան», Հայաստան. Ֆինանսներ և էկոնոմիկա, N 9-10 (171-172), սեպտեմբեր-հոկտեմբեր, 2014թ. էջ 61-64:
4. **Просветов Г. И.** «Поведение потребителей: Задачи и решения»: Учебно-практическое пособие. - М.: Издательство «Альфа-Пресс», 2010. - 192 с.
5. **Mai Manfred.** Weltgeschichte. - Carl Hanser Verlage, Wien. 2002.
6. **Kotler P., Keller K. L.** Marketing Management. 14<sup>th</sup> Edition, – New Jersey: Prentice-Hall, 2012. – 657 p.
7. [www.nber.com](http://www.nber.com)

Հոդվածների նկարագրության մեջ պարտադիր նշվում է ամսագրի անունը կամ օրենսդրական հավաքածուն, որտեղ դրանք տպագրվել են, տարին, համարը և էջը: Գրականության ցանկը ներառում է դիպլոմային աշխատանքի դեպքում՝ **15-20** և մագիստրոսական թեզի դեպքում՝ **30-50** աղբյուրներ:

**Հավելվածները** տեղադրվում են գրականության ցանկից հետո՝ տեքստում իրենց նշելու հերթականությամբ: Յուրաքանչյուր հավելված պետք է սկսել նոր էջից, որի վերնի աջ անկյունում գրված պետք է լինի «Հավելված» բառը և համարը՝ արաբական թվերով (առանց № նշանի): Փոքրածավալ հավելվածները չեն էջակալվում, մեծածավալները էջակալվում են ընդհանուր տեքստից առանձին:

Դիպլոմային աշխատանքները և մագիստրոսական թեզերը ներկայացվում են պաշտպանության Power Point կամ այլ ծրագրերի միջոցով:

#### 8. Աշխատանքի ղեկավարի կարծիքը

Աշխատանքի վերջնական տարբերակը ստանալուց հետո ղեկավարը երեք աշխատանքային օրվա ընթացքում տալիս է կարծիքը, որում պետք է գնահատված լինեն.

- թեմայի կարևորությունը կամ արդիականությունը,
- աշխատանքում ամրագրված խնդիրների լուծման կարողությունները և աստիճանը,
- աշխատանքի կատարման ժամանակ ինքուրույնության աստիճանը, ուսանողի տեսական պատրաստվածության մակարդակը, ընտրված թեմայի հիմնական մոտեցումներին համապատասխան գիտելիքները,
- տեղեկատվական նյութից օգտվելու կարողությունները,
- վերլուծական մեթոդների կիրառումը,
- եզրակացությունների հիմնավորումը,

- նյութի շարադրանքի որակը և ձևավորումը:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում աշխատանքում առկա և նախօրոք ընդգծված թերություններին, որոնք չեն վերացվել ուսանողի կողմից: Ղեկավարը որոշում է տվյալ աշխատանքը պաշտպանության ներկայացնելու հարցը, ընդ որում, աշխատանքին գնահատական չի դրվում, այլ տրվում է որակական բնութագրումը և պաշտպանության ներկայացման երաշխավորումը (կամ չի երաշխավորում):

Ամբիոնի/սեկտորի վարիչը որոշում է ուսանողին պաշտպանության թույլատրումը՝ տիտղոսաթերթի վրա կատարելով համապատասխան գրառում: Բացասական որոշման դեպքում հարցը քննարկվում է ամբիոնի/սեկտորի նիստում, և որոշումը ներկայացվում է մասնաճյուղի, ինստիտուտի տնօրենին, ֆակուլտետի ղեկանին:

## 9. Աշխատանքի գրախոսումը

Նախնական պաշտպանությունից հետո աշխատանքը ամբիոնի/սեկտորի վարիչի կողմից ուղարկվում է գրախոսության:

Գրախոսությունը՝ ի տարբերություն ղեկավարի կարծիքի, աշխատանքի որակական գնահատումն է անկախ (որպես կանոն, արտաքին) փորձագետի կողմից: Որպես կանոն, գրախոսներ կարող են հանդես գալ պետական մարմինների, բիզնես միջավայրի, գիտահետազոտական ինստիտուտների մասնագետներ և այլ բուհերի համապատասխան մասնագիտության դասախոսներ, ընդ որում, մագիստրոսական թեզերի գրախոսման համար պահանջվում է գիտական աստիճանի առկայություն:

Դիպլոմային աշխատանքների գրախոսումը կարող է իրականացվել ատեստավորված հանձնաժողովի անդամների կողմից ( ըստ Հավելված 15-ի):

Մագիստրոսական գրախոսությունը շարադրվում է ազատ ոճով՝ անդրադարձ կատարելով հետևյալ պահանջներին.

- թեմայի արդիականությունը,
- թեմայի հետազոտման ամբողջական արտահայտվածությունը,
- աշխատանքում ամրագրված խնդիրների լուծման աստիճանը,
- աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը,
- առանձին գլուխների վերաբերյալ բնութագրումները,
- խնդրի լուծման աստիճանը և հետազոտության ավարտուն լինելը,
- համապատասխանությունը աշխատանքներին ներկայացվող

պահանջներին,

- թերությունները և բացթողումները,
- կատարման ինքնուրույնության աստիճանը,
- գնահատականը,
- շրջանավարտին համապատասխան որակավորում շնորհելը (չշնորհելը):

Գրախոսը ստորագրում է գրախոսությունը, և այն հաստատվում է տվյալ կազմակերպության կնիքով:

## 10. Աշխատանքների ներկայացումը պաշտպանության

Աշխատանքները ներկայացվում են պաշտպանության՝ ըստ ՀՀ ԿԳ  
նախարարության կողմից հաստատված կարգի:

**”ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ” ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ (ԴԱՄԻՉ 031101.00.6 և 031101.00.7)  
ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ  
ԹԵՄԱՆԵՐ**

**ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ**

1. Ռազմավարական կառավարման գործընթացը ձեռնարկություններում
2. Ձեռնարկության ռազմավարական պլանի մշակում
3. Ձեռնարկության ձևավորման բիզնես-պլանի մշակում
4. Ձեռնարկության վերակազմակերպման բիզնես-պլանի մշակում
5. Ձեռնարկության դիֆերսիկացման բիզնես-պլանի մշակում
6. Ձեռնարկության արդիականացման (տեխնիկական կամ վերակազմակերպման) տեխնիկա-տնտեսական հիմնավորումը
7. Ձեռնարկության սոցիալական զարգացման պլանի մշակում,
8. Ձեռնարկությունում հիմնական կամ օժանդակ արտադրամասի/բաժնի ձևավորման արտադրական-տնտեսական կամ օպերատիվ-արտադրական պլանի հիմնավորում կամ մշակում,
9. Կառավարման բարելավման ուղղությունները ձեռնարկություններում
10. Արտադրության արդյունավետության ցուցանիշները ձեռնարկություններում
11. Ձեռնարկության արտադրական հզորությունները
12. Ձեռնարկության կազմակերպչական տեխնիկական աստիճանի բարելավման միջոցառումների մշակում (արտադրական հզորությունների օգտագործում, արտադրական ցիկլի տևողության կրճատում, արտադրողականության բարձրացում և այլն),
13. Ձեռնարկության կառուցվածքի լավարկում (կազմակերպչական, կառավարման, արտադրական),
14. Ձեռնարկության օժանդակ կառույցների (տրանսպորտային, շինարարական, էներգետիկական, ծառայությունների և այլն) կառուցվածքի բարելավում,
15. Ձեռնարկության ռեսուրսների օգտագործման վերլուծություն և գնահատում,
16. Ձեռնարկության ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացում,
17. Ձեռնարկության արտադրական-իրացման գործունեության ընդլայնման միջոցառումների մշակում,
18. Ձեռնարկության մասնաճյուղի (արտաքին շուկայում նույնպես) ձևավորման կազմակերպչական-տնտեսական միջոցառումների մշակում,
19. Ձեռնարկության լոգիստիկ համակարգի բարելավման միջոցառումների մշակում,
20. Ձեռնարկության կոմպլեկտավորման նպատակով նյութերի գնման կազմակերպման համակարգի բարելավումը,
21. Ձեռնարկության ֆինանսա-տնտեսական վիճակի բարելավումը,
22. Ձեռնարկության աշխատանքի արտադրողականության բարձրացումը,

23. Ձեռնարկության աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով մոտիվացիոն համակարգի (նյութական և բարոյական խրախուսում և այլն) մշակում,
24. Ձեռնարկության ինքնարժեքի իջեցման և շահույթի բարձրացման միջոցառումների մշակում,
25. Ձեռնարկությունում գնման և պահեստավորման գործունեության միջոցառումների մշակում,
26. Ձեռնարկություններում պաշարների կառավարման արդյունավետության բարձրացումը,
27. Ձեռնարկության նյութատեխնիկական ապահովման բարելավման միջոցառումների մշակում,
28. Ձեռնարկությունների ծախսերի արդյունավետ կառավարումը,
29. Արտադրանքի/ծառայության ինքնարժեքը և նրա իջեցման ուղիները,
30. Ֆինանսական կայունության ցուցանիշները և դրանց բարելավումը ձեռնարկություններում,
31. Շահույթի և շահութաբերության վերլուծությունը ձեռնարկություններում,
32. Արտադրանքի/ծառայության գնի ձևավորման մեխանիզմը,
33. Տնտեսական ռիսկի կառավարումը ձեռնարկություններում,
34. Ձեռնարկության շրջանառու միջոցները,
35. Ձեռնարկության մարքեթինգային գործունեությունը,
36. Ձեռնարկության մարքեթինգային ռազմավարության մշակում,
37. Իրացման, սպառման ծավալների ավելացման նպատակով ձեռնարկության մարքեթինգային պլանի մշակում,
38. Նոր արտադրանքի/ծառայության իրացման հիմնավորումը,
39. Ձեռնարկության իրացման համակարգի կատարելագործման միջոցառումների մշակում,
40. Ձեռնարկության ապրանքային/ծառայության քաղաքականության ձևավորում,
41. Արտադրանքի/ծառայությունների սպառման շուկայի կանխատեսումը,
42. Ձեռնարկության ապրանքի/ծառայության պահանջարկի կանխատեսում և շուկայի սեզմենտավորում,
43. Ձեռնարկության ապրանքի/ծառայության տարբեր կենսափուլերում մարքեթինգային ռազմավարության մշակում,
44. Թողարկվող արտադրանքի կամ առաջարկող ծառայության որակի բարելավման միջոցառումների մշակում,
45. Ձեռնարկության որակի (համակարգ, գործընթաց, ապրանք, ծառայություն) կառավարման համակարգի մշակում
46. Ձեռնարկության ապրանքի կամ ծառայության մրցունակության բարելավումը,
47. Ձեռնարկության մրցունակության բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակում,
48. Նոր ապրանքի կամ ծառայության առաջխաղացման ռազմավարության մշակում,
49. Ձեռնարկության մրցունակության բարձրացման հարցերը,

50. Շուկայում ձեռնարկության մրցակիցների ռազմավարությունների ուսումնասիրում և մրցունակության բարձրացման մշակում,
51. Շուկայում ձեռնարկության կողմից արտադրանքի/ծառայության իրացման գնագոյացման մեթոդաբանության հիմնավորում,
52. Ձեռնարկության արտադրանքի/ծառայության իրացման շուկայի սեզնամենտավորում,
53. Անձնակազմի կառավարման համակարգը ձեռնարկություններում
54. Անձնակազմի աշխատանքի վարձատրության և խթանման համակարգի բարելավումը,
55. Ձեռնարկության անձնակազմի վերապատրաստման համակարգի բարելավումը,
56. Ձեռնարկության անձնակազմի կառավարման բարելավման նպատակով կազմակերպչական տնտեսական միջոցառումների մշակում,
57. Ձեռնարկության անձնակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացման միջոցառումների մշակում,
58. Ձեռնարկության տեղեկատվական հոսքերի արդյունավետ կառավարումը,
59. Ձեռնարկությունում արտադրական համակարգերի մասնագիտացման խորացման առաջարկությունների մշակում,
60. Համակցված արտադրության խորացման կազմակերպչական-տեխնիկական միջոցառումների մշակում,
61. Փաստացի արտադրության պայմաններում կոոպերացման արդյունավետ ձևերի մշակում,
62. Արտաքին տնտեսական կապերի ձևավորումը ձեռնարկություններում,
63. Ապրանքի կամ ծառայության առաջխաղացումը միջազգային շուկայում,
64. Արտադրության/ծառայության արտահանման կանխատեսում,
65. Ձեռնարկության նորամուծական քաղաքականությունը,
66. Ձեռնարկության ներդրումային քաղաքականությունը:

### **ՄԱԳԻՍՏՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ԹԵՄԱՆԵՐ**

1. Ռեսուրսախնայողության տնտեսական մեխանիզմը ձեռնարկություններում
2. Ձեռնարկության ֆինանսական կայունության գնահատումը
3. Ձեռնարկության վճարունակության և իրացվելիության գնահատումը
4. Ձեռնարկության գնային ռազմավարությունը
5. Մարդկային ռեսուրսների կառավարման ռազմավարության առանձնահատկությունները ձեռնարկություններում
6. Ձեռնարկության արդյունավետության գնահատման ժամանակակից մոտեցումները
7. Ձեռնարկությունների ռազմավարության մշակման մեթոդների և տեխնոլոգիաների հետազոտում
8. Տնտեսական կայունության և զարգացման խնդիրները ձեռնարկություններում

9. Աուտոստրինգի կազմակերպումը և տնտեսական արդյունավետությունը ձեռնարկություններում
10. Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման խնդիրները ոլորտում
11. Կառավարչական որոշումների ընդունման մեխանիզմը ձեռնարկություններում
12. Ձեռնարկության ներդրումային քաղաքականությունը
13. Ձեռնարկության տնտեսական զարգացման և կանխատեսման ուղղությունները
14. Ձեռնարկության զարգացման լոգիստիկական տեսանկյունները
15. Ձեռնարկության նորամուծական քաղաքականությունը
16. Ձեռնարկության արտադրական ներուժի օգտագործման բարելավման ուղղությունները
17. Ձեռնարկության կայունության հիմնախնդիրները
18. Արտադրական լոգիստիկայի արդյունավետության գնահատման ժամանակակից մոտեցումները
19. Ֆինանսական կայունության բարելավման ուղիները ձեռնարկություններում
20. Ձեռնարկության կայունության տնտեսական գնահատումը
21. Արդյունաբերական/տեղեկատվական լոգիստիկայի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
22. Ձեռնարկության ֆինանսական կայունության խնդիրները
23. Լոգիստիկական գործունեության կառավարումը ձեռնարկություններում
24. Արտադրական ծախսերի կառավարումը ձեռնարկություններում
25. Ձեռնարկության կայունության ժամանակակից ուղղությունները
26. Արտադրական ռեսուրսների կառավարման համակարգը ձեռնարկություններում
27. Ոլորտի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում
28. Ձեռնարկության զարգացման ժամանակակից ուղղությունները
29. Տնտեսական արդյունավետության հիմնախնդիրները ՀՀ տնտեսության ոլորտներում
30. Տնտեսական մրցակցության ապահովման խնդիրները ՀՀ տնտեսության ոլորտներում
31. Տնտեսական մրցունակության բարձրացման հիմնախնդիրները ոլորտում

## Դիպլոմային աշխատանքի կառուցվածքը

| Անվանումը                                                    |                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                                               | Էջ      |
|--------------------------------------------------------------|-------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------------|---------|
|                                                              | <ul style="list-style-type: none"> <li>Տիտղոսաթերթ (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից)</li> <li>Առաջադրանք (լրացվում և տրվում է ամբիոնի/սեկտորի կողմից)</li> </ul>                                                                                                                                                                                                                                                                                                                                                   |         |
